

Կ Ո Վ Կ Ա Ս

Կովկաս իմ ներքեւ, միայնակ բարձրութեան մէջ
 Կանգնած եմ ձեռն վրայ՝ ապառաժի մը ծայրը .
 Արծիւն հեռուէն վեր բարձրանալով,
 Կը մախրէ անշարժ ինձ հետ հաւասար :
 Այս տեղէն կը տեսնեմ ծագումն հեղեղներու
 Եւ առաջին դարդիւնն սպառնալից փլատակներու :
 Այստեղ ամպերն հանդարտ կը փախն իմ ներքեւ,
 Անոնց մէջէն գահավիժելով կը շառաչեն ջրվէժները,
 Անոնց ներքեւ ահագին մերկ ապառաժներ,
 Այնտեղ ներքեւն նիհար մամուռ եւ չոր մացառ .
 Այնտեղ արդէն պուրակներ, կանանց տաղաւարներ,
 Ուր թռչուններ կը նուուղեն, եղջերուները կ'ոստոստեն :
 Այնտեղ արդէն լեռներուն մէջ մարդիկ բոյն են դրած,
 Եւ ոչխարները կը սողան խոտաւէտ ապառաժներու վրայ,
 Ու հովիւն ալ կ'իջնէ գուարթ դաշտագետնի վրայ .
 Ուր Արագուայ կը սըլանայ ստուերանիստ ամպերէն,
 Եւ աղփատ ձիւղորդ կ'ապաւինի կիրճի մէջ
 Ուր Թերէֆ կը խաղայ վայրագ գուարթութեամբ,
 Կը խաղայ եւ կը մոնչէ ինչպէս մանուկ գագան՝
 Որ կը դիտէ կերակուրն իր երկաթի վանդակէն,
 Եւ ամպերուն կը զարնուի թշնամութեամբ անօգուտ,
 Եւ կը լիզէ ապառաժներ ալիքներովն անօթի . . .
 Ի գո՛ւր, չկայ անոր ոչ կերակուր եւ ոչ սփոփանք,
 Կը նեղեն զինք փարակոյտերը մունջ սարսափով :

Պ Ա Յ Ե Ա Կ Ի Ն

Իմ անտաշ օրերու ընկեր	Ամէն վայրկեան կը դանդաղին իլերը
Զառամեալդ իմ աղանետակ .	Քու թարշամած ձեռքերուդ մէջ,
Միայնակ սոճիներու անտառի մէջ	Կը դիտես
Վաղուց երկար կը սպասես ինձ :	Սեւ ու հեռաւոր մամբուն
Դու սենեկիդ լուսամուտին ներքեւ	Թախիծը, նախագգացումը, հոգերը
Կը վշտանաս հսկելով :	Կը նեղեն միշտ քու սիրտը . . .

Թրգմ. Ռուս. է չ. Յ. Մարգարեան(1)

ՊՈՒՇԿԻՆ

(1) «Կովկաս»-ը եւ «Մայնակիւն»-ը ողբ. չ. Յովսէփ Վ. Մարգարեանի թուղթերու մէջէն է որ հանած կը հրատարակենք, որպէս նմոյշ անոր գրական զբօսանքներուն :

Ն Ե Խ Ա Ր Ն Ե Ր Մ Ե Ր Ա Ն Մ Ա Հ Ն Ե Ր Է Ն

Հաճոյքով կը հրատարակենք հոս մեր ազգային կարկառուն դէմքերու քանի մը գրա-
 կան նշխարները, որոնք հետաքրքրական են թէ՛ գրական եւ թէ՛ պատմական յուշի տեսակէտով
 մեր անցեալ դարու շրջանէն. ըսենք նաեւ բացառապէս ազգասիրական եւ կրթական :

Առաջինը նամակ մը Պէշիքթաշլեանի ուղղուած առ Չ. Արսէն Բազրատունի, ուր շնոր-
 հալի բանաստեղծը ակնարկը կ'ընէ Յոյն-Լատին-Իտալացի դերագոյն քերթողներու հրաշակերտ-
 ներուն, զորս հայացուցած էր կամ հայացնելու հետ էր անդուզական թարգմանիչը Չ. Ա. Կ.
 Բազրատունի :

Պէշիքթաշլեան հոն յատկապէս կը ներկայացնէ իր աշակերտուէին օր. Սրբուհի Վա-
 հանեան — երբեմն օտարացած հայու թեմէն զգացումով ու լեզուով, ապա հմայուած Մ. Պէշիք-
 թաշլեանի հոգեկան ու մտաւոր հմայքէն ու սրտազբաւ ազգասիրութենէն — որ տարուան մը
 շրջանին մէջ ոչ միայն յաջողած է սորվիլ դրարարը, այլ նաեւ դրարար նամակ ու քերթուած
 դրել, ինչպէս կը տեսնենք մեր ներկայացուցած Բ. եւ Գ. նշխարներով. եւ Գարուն քերթուա-
 ծով, որ նոյն 1864 թուականին արդէն հրատարակուած է «Բազմավէպ»ին մէջ :

Զորբորդ նշխարը Պըլզլիի մէկ նամակն ուղղուած առ Չ. Ղ. Ալիշան, ուր այնքան
 ցայտուն կը տեսնուին երախտագիտութիւնը, ազգասիրութիւնը եւ խոնարհամտութիւնը Մու-
 բատեան Վարժարանի նախկին սանին եւ մեծ ու անուանի Հայուն : Գեղեցիկ օրինակ մեր օրերու
 հայ գործիչներուն օտար միջավայրի մէջ :

Վերջին նշխարը Վարուժանէն է. պարագայական նամակ մը ուր ոսկի հատեր կան .
 մեր երկտասարդութեան յուր բարձրն քով — որ դժբախտաբար նոյնն է այսօր ալ — ի՞նչ սրտա-
 յոյզ ու ազնիւ են ներողամտութեան խօսքերը յանուն Հայ ցեղին որուն ամէն դուակ իբր այդ
 մեղի սիրելի պէտք է ըլլայ միշտ եւ ի հարկին կարեկցելի. «Բայց ներէ, Հայ են» :

Իսկ զիրբը՝ որուն տպագրութեան վրայ կը խօսի՝ «Յեղին սիրան» է :

ԽՄԲ.

Ա. — ՄԿՐՏԻԶ ՊԵՇԻՔԹԱՇԼԵԱՆ՝ ԱՌ. Հ. ԱՐՍԷՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Գերապատիւ Տէր

Ամօք ինչ յառաջ յղեալ էի առ Ձեզ թուղթ մի ի ձեռն Ապտուլլահեան
 եղբարց ուղեւորելոց ի վեներտիկ. եւ թէպէտ ցարդ չընկալայ զպատասխանին՝
 այլ ոչինչ գարմանամ ընդ այն. հանեալ եմ մանաւանդ՝ զի ոչ գողացայ զժա-
 մանակն եւ չվնասեցի ժամուցն նուիրելոց առ Միլտովն, առ Գեմուսէն, առ
 Կիկերովն եւ առ Հովեր. եւ կենակցելով յար ընդ այնին գոր գրաւեալ էֆ դուք
 անշուշտ ֆերել յուշոյն զՊէշիքթաշլեան գոֆ. այլ տեղին գոր գրաւեալ էֆ դուք
 ի յիշատակիս, կայ եւ մնայ խոր եւ լայնատարած իբրեւ գիւնաբար Ձեր :
 Ընկալջիք ընդ գրայս եւ գնամակ աշակերտուհոյս Սրբուհի Վահանեան
 օրիորդին թողին Արգումանեանց. մի ի ջերմ գարմացոյց Ձերոց. գարմանալի
 եւ ինքն ուշիմութեամբն եւ ֆերթոյասէր ախորժակօք. նամակն այն եւ ուղերձն
 առ Ձեզ եւ ֆերթուածն Գարուն(1) յորս չիք ամենեւին սրբագրութիւն, արդիւնք
 եւ միամեայ աշակերտութեան իւրոյ. զԳարուն, եթէ այնպէս հանոյ թուեսցի
 Ձեզ, տաջիք յեռու ի Բազմավիպին ի խրախոյս նմանասեռ հասակակցաց :

(1) Ստուգել «Գարուն»ը հրատարակուած է «Բազմավէպ»ի մէջ, 1864, էջ 244. դրարար է եւ բաւական երկայն ու սիրուն ոտանաւոր մը, որուն ստորեւ հրատարակիչը հետեւեալը կը ծանօթագրէ. «Ազգային ուսումնասէր Պօլսեցի օրիորդի մը մէկ տարուան աշակերտութեան ժամանակէն է եղեր այս գրուածքս, զոր ի քաջալերս իրեն ջանիցը, եւ ի գեղեցիկ յորբոր երկասիրութիւնն է եղեր այս գրուածքս, զոր ի քաջալերս իրեն ջանիցը, եւ ի գեղեցիկ յորբոր համագրէ եւ ջանասէր օրիորդաց կը խնդրուինք հրատարակելու», լռելով թէ հեղինակին եւ չհամագրէ եւ ջանասէր օրիորդաց կը խնդրուինք հրատարակելու, Սրբուհի Վահանեանի (Տիւսար) եւ Մ. Պէշիքթաշլեանի : ՄԱՆ. ԽՄԲ.

